



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 13.01.16 թ.

Ելք № 002

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք Ձեզ, որ «Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը բազմիցս դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հայտնելով, որ առավել հաճախակի են դարձել դեպքերը, երբ օրենքի փոփոխություններից բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են հաշվետվությունների և հաշվարկների ներկայացման օրենքով սահմանված վերջնաժամկետին նախորդող օրերին, իսկ հարկային մարմնի հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգում դրանց ձևերն առկա են լինում վերջին կամ նախավերջին օրերին: Ընդ որում, նման դեպքերի հետ կապված կազմակերպության կողմից ներկայացվել են կոնկրետ առաջարկություններ, որոնք կարող էին մեղմել հարկ վճարողների ռիսկը: Չանդրադառնալով առաջարկությունների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության արձագանքին, կից Ձեզ է ներկայացվում 01.01.2016թ.-ից շրջանառության հարկ վճարող համարվելու համար «Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն» հաշվետվության ձևը (131), որն 2016 թվականի հունվարի 13-ի դրությամբ տեղադրված է հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգում, որով հարկ վճարողը պետք է հավաստի, որ նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը չի գերազանցել 58,35 մլն դրամը:

Հարկ ենք համարում նշել, որ նշված հայտարարության ձևում անհրաժեշտ էր միայն «58,35» փոխարինել «115.0»-ով:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան

| | | | | | | | | |
|--|-------------------------------------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | Փաստաթղթի հերթական համարը | | | | | | | |
| ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ | (լրացվում է հարկային մարմնի կողմից) | | | | | | | |
| 1. Հարկ վճարողի հաշվառման համարը | 8 | 0 | 5 | 0 | 3 | 3 | 5 | 8 |
| 2. Առևտրային կազմակերպության անվանումը | | | | | | | | |
| 3. Անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) անունը, ազգանունը | ՓԱՅԼԱԿ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ | | | | | | | |
| 4. Հարկ վճարողի գտնվելու վայրը | ՇՈՊԸՆԻ 1 ՆՐԲ. 3 27 | | | | | | | |
| 5. Հեռախոսի համարը | +(374)91663139 | | | | | | | |

Սույն հայտարարությունը ներկայացնում է 01.01.2016թ.-ից շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

| | | |
|---|--|--|
| <p>Սույնով հայտարարում եմ որ՝</p> <p>ա) նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը առանց ԱԱՀ-ի,</p> <p>չի գերազանցել 58,35 մլն դրամը</p> <p>բ) չեմ հանդիսանում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող և (կամ) ներմուծող</p> <p>գ) չեմ հանդիսանում բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակից, գրավատուն, արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնող, ներդրումային ֆոնդ, ֆոնդերի կառավարիչ, վճարահաշվարկային կազմակերպություն, խաղատուն, շահումով խաղերի կամ վիճակխաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող, աուդիտորական ընկերություն, հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպություն</p> <p>դ) չեմ հանդիսանում համատեղ գործունեության պայմանագրի, ապրանքների մատակարարման կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ</p> <p>ե) սույն հայտարարությունը ներկայացնող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը)</p> <p>չի պատկանում ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող ֆիզիկական անձին,</p> <p>զ) սույն հայտարարությունը ներկայացնող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը)</p> <p>չի պատկանում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը),</p> <p>է) սույն հայտարարությունը ներկայացնող առևտրային կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին</p> <p>չի պատկանում ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը).</p> <p>Տեղյակ եմ սույն հայտարարության մեջ տրվող ոչ ճիշտ տեղեկությունների համար ՀՀ օրենսդրությանը սահմանված պատասխանատվությանը:</p> | | |
| <p>Վազմակերպության տնօրեն (անհատ ձեռնարկատեր, նոտար)</p> | <p>ստորագրությունը, անունը, ազգանունը</p> | |
| <p>Հայտարարության ստացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը՝</p> | <p>_____ 20 թ. (լրացվում է հարկային տեսչության կողմից)</p> | |

Փայլակ Թադևոսյան